

Կ Ա Ր Գ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության կարգը:

2. Հաստատությունում առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելությունն՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով:

3. Հաստատությունում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ սույն կարգի 39-րդ կետով սահմանված՝ մրցութային հիմունքով, բացառությամբ՝ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտային) միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների: Ոստիկանության ուսումնական հաստատությունում ընդունելությունն իրականացվում է Ոստիկանության պետի հրամանով սահմանված կարգով:

4. Օտարերկրացիները՝ իրենց ընտրությամբ, Հաստատություն կարող են ընդունվել սույն կարգով՝ միայն վճարովի համակարգ կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության այն երկքաղաքացիները կամ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր վերջին երեք տարիներին սովորել և ավարտել են օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններում կարող են իրենց ընտրությամբ Հաստատություն ընդունվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված կարգով և պայմաններով, սակայն պահպանելով Ոլորտային մասնագիտությունների համար նախատեսված ընդունելության պահանջները: Այն օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր վերջին երեք տարիներին սովորել և ավարտել են դրանք, Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ընդունելությանը մասնակցում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված կարգով:

6. Արգելվում է Հաստատությունների վճարովի ուսուցմամբ ուսումնառող՝ Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Զվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների համար, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է նրանց կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսման վարձի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ Հաստատությունում ուսումնառող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար: Սույն կետում նշված արտակարգ իրավիճակի առկայությունը հավաստում է արտաքին քաղաքականության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Հաստատությունն ընդունելությունն իրականացնում է.

1) արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով ըստ մասնագիտությունների պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված առկա (ստացիոնար) ուսուցմամբ անվճար և Հաստատության կողմից կրթության տեղեկատվական համակարգում մուտքագրված վճարովի տեղերի թվին համապատասխան (չգերազանցելով ըստ մասնագիտությունների (որակավորումների) լիցենզիայով հաստատությանը հատկացված ընդհանուր տեղերի թիվը).

2) միջին մասնագիտական կրթական ծրագրով Լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված հեռակա ուսուցմամբ վճարովի տեղերին համապատասխան:

8. Լիազորված մարմնի կողմից ըստ հաստատությունների և մասնագիտությունների ընդունելության տեղերը համապատասխան հրամանով հատկացնելուց հետո «Mulberry» փաստաթղթաշարժի համակարգի միջոցով («Mulberry» փաստաթղթաշարժի համակարգին միացած չլինելու դեպքում ուսումնական հաստատության Էլեկտրոնային հասցեին) 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է ուսումնական հաստատություններին՝ տեղեկատվությունը հրապարակելու նպատակով, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԿՏԱԿ)՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդունելության հայտագրման համակարգում (այսուհետ՝ ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգ) համապատասխան փոփոխություններն իրականացնելու նպատակով:

9. Հաստատությունները հիմք ընդունելով Լիազորված մարմնի կողմից հատկացված տեղերը՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում ԿՏԱԿ են ներկայացնում ըստ մասնագիտությունների՝ որակավորումների, մասնագիտացումների, երաժշտական գործիքների տեսակների և մարզաձևերի, տեղերի քանակը՝ վճարովի և անվճար:

10. Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ԿՏԱԿ-ը՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում, իսկ տնօրենը (ռեկտորը) Հաստատության Դիմորդի անկյունում, պաշտոնական կայքէջում (առկայության դեպքում) և սոցիալական ցանցի էջում հրապարակում են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարություն, որը ներառում է դիմորդի փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագիտության՝

- 1) կրթության ձևը՝ առկա (ստացիոնար) կամ հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն), դրսեկության ձևով ուսուցման պայմանները,
- 2) կրթության հիմքը՝ առնվազն հիմնական կամ միջնակարգ,
- 3) ըստ մասնագիտությունների անվճար և վճարովի ընդունելության տեղերի քանակը,
- 4) քննության օր(եր)ը, ժամը, վայրը, տեսակը (գրավոր, բանավոր, գեղարվեստական ծրագրի կատարումը, և այլն), ըստ մարզաձևերի ֆիզիկական պատրաստության նորմատիվները և քննական ծրագրային չափանիշները,
- 5) ուսման վճարի չափը,
- 6) ուսման տևողությունը,
- 7) որակավորումը,
- 8) և այլ տեղեկատվություն:

11. Մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերն Էլեկտրոնային եղանակով ընդունվում են ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից սկսած.

- 1) ոչ Ոլորտային մասնագիտություններով՝ մինչև օգոստոսի 17 ներառյալ՝ ժամը 18⁰⁰,
- 2) Ոլորտային մասնագիտություններով՝ մինչև օգոստոսի 8-ը ներառյալ՝ ժամը 18⁰⁰, իսկ քննություններն անցկացվում են օգոստոսի 9-ից 17-ը ընկած ժամանակահատվածում,
- 3) հեռակա ուսուցման համար՝ մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ՝ մինչև ժամը 18⁰⁰:

12. Դիմորդների կողմից դիմում հայտերը ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում կարող են փոփոխվել մինչև գործերի ընդունման օրվա ավարտը:

13. Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է փաստաթղթերի ընդունման, իսկ Ոլորտային մասնագիտությունների գծով՝ քննությունների ավարտման հաջորդ աշխատանքային օրը:

14. Հաստատության ընդունող հանձնաժողովը մրցույթն ամփոփելու ընթացքում կատարում է ներքին վերաբաշխում ըստ մասնագիտության՝ որակավորումների, մասնագիտացումների, երաժշտական գործիքների տեսակների և մարզաձևերի տեղերի: Ներքին վերաբաշխման արդյունքում թափուր մնացած տեղերը (անվճար և վճարովի) հատկացվում են քննության արդյունքում առավել բարձր գնահատական ստացած և մրցույթից դուրս մնացած դիմորդին, իսկ հավասար միավորներ ունենալու դեպքում առաջնայնությունը տրվում է սույն կարգի 39-րդ կետի 3-րդ կետով սահմանված առաջնահերթությանը:

15. Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

16. Մրցույթի արդյունքները հաստատության կողմից ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգի «Դիմորդներ» բաժնում հրապարակվելուց հետո, ԿՏԱԿ–ը 2 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքում ըստ մասնագիտությունների, կրթական հիմքի և ուսուցման ձևի թափուր մնացած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը հաշվարկում է ինքնաշխատ (ավտոմատ) եղանակով և հրապարակում այն ԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում:

17. Հաստատությունում թափուր տեղերի առկայության դեպքում կազմակերպվում է ընդունելության երկրորդ փուլ՝ առաջնորդվելով սույն կարգի 39-րդ կետի պահանջներով:

18. Հաստատության ընդունելության երկրորդ փուլին մրցութային հիմունքով կարող է ընդունվել ընթացիկ տարում մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած, ինչպես նաև առաջին փուլին դիմում հայտ չներկայացրած դիմորդը՝ ոչ Ոլորտային մասնագիտությունների գծով, իսկ Ոլորտային մասնագիտությունների գծով՝ տվյալ տարվա առաջին փուլին մասնակցած և դրական գնահատական ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդը:

19. Երկրորդ փուլի հայտերը ընդունվում են թափուր տեղերը հրապարակելուց հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 24-ը մինչև ժամը 18⁰⁰ ներառյալ՝ ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում ներկայացնելով սույն կարգի 31-րդ կետով պահանջված փաստաթղթերը, իսկ Ոլորտային մասնագիտություններով դիմորդը նաև տվյալ տարվա համար հանձնած քննության գնահատականի վերաբերյալ տեղեկանքը:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

20. Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 5 օրվա ընթացքում Հաստատությունում տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:

21. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը՝ Հաստատության տնօրենը (ռեկտորը), նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները:

22. Քննությունների անցկացման նպատակով ստեղծվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել Հաստատության, ինչպես նաև հրավիրված մասնագետներ: Քննական հանձնաժողովների նախագահներին հաստատում է Լիազորված մարմինը՝ ընդունող հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, իսկ կազմերը հաստատում է Հաստատության տնօրենը (ռեկտորը):

23. Ընդունող հանձնաժողովի նախագահը՝ ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում, Լիազորված մարմին է ներկայացնում քննական հանձնաժողովների նախագահ/ներ/ի թեկնածություն/ներ/ը և քննության օրերը:

24. Ընդունող հանձնաժողովը սույն կարգին և Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած աշխատանքային պլանին համապատասխան ապահովում է՝

1) առկա (ստացիոնար) և/կամ հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպումն ու անցկացումը,

2) դիմորդների էլեկտրոնային (առցանց) եղանակով ստացված ընդունելության փաստաթղթերի ընդունումը և գրանցամատյանի վարումը, ինչպես նաև սույն կարգի 34-րդ կետով սահմանված դեպքում դիմում հայտի մերժումը և մերժման հիմնավորումը,

3) մասնագիտական կողմնորոշման նպատակով դիմորդների համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը,

4) սույն կարգի 37-րդ կետով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդներից էլեկտրոնային եղանակով ստացված անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների ընդունումը և համապատասխան ձևակերպումը,

5) ընդունելության մրցույթի վերաբերյալ տեղեկատվության և քննական առարկաներից խորհրդատվության տրամադրումը,

6) ընդունելության մրցույթի անցկացումը և Հաստատություն ընդունված դիմորդներին հրամանագրելու մասին որոշման ընդունումը,

7) ընդունելության համար Հաստատության շենքի նախապատրաստումը, տարածքների հատկացումը և կահավորումը, ինչպես նաև ընդունելության ընթացքում հերթապահությունը և տարածքի պահպանումը,

8) ընդունելությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը, ձևակերպումը,

9) Հաստատության ընդունելության մրցույթի արդյունքները ամփոփելուց հետո ըստ մասնագիտության՝ որակավորումների, մասնագիտացումների, երաժշտական գործիքների տեսակների և մարզաձևերի տեղերի վերաբաշխում:

25. Ընդունելության նախապատրաստման և կազմակերպմանն առնչվող հարցեր քննարկելու համար ընդունող հանձնաժողովը պարբերաբար անց է կացնում նիստեր, որոնք

արձանագրում է հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, իսկ արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և պատասխանատու քարտուղարը:

26. Ընդունող հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում ու ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները և վերահսկում է ընդունելության գործընթացը,

2) հրապարակում է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարությունը,

3) ձևավորում և հաստատում է քննական հանձնաժողովների կազմերը, ինչպես նաև կազմակերպում և վերահսկում է այդ հանձնաժողովների աշխատանքները,

4) հաստատում է Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննությունների անցկացման ժամանակացույցը,

5) ընդունող և քննական հանձնաժողովների անդամներին ծանոթացնում է ընդունելության գործընթացը կարգավորող նորմատիվ փաստաթղթերին, ինչպես նաև ապահովում է նրանց աշխատանքային պայմանները,

6) որոշում է ընդունում Ոլորտային մասնագիտություններով դիմորդին ընդունելության քննություններին մասնակցելու թույլտվության վերաբերյալ, որի մասին նշում է կատարում նրա դիմումի վրա,

7) միջոցներ է ձեռնարկում ընդունելության ժամանակահատվածում հասարակական կարգի պահպանության, բժշկական սպասարկման ապահովման ուղղությամբ,

8) պատասխանատու է Հաստատությունում ընդունելության գործընթացի պատշաճ նախապատրաստման, կազմակերպման և անցկացման համար:

27. Ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) կատարում է ընդունող հանձնաժողովի նախագահի պարտականությունները՝ նրա բացակայության ընթացքում,

2) ձևավորում է «Դիմորդի անկյուն»՝ մասնագիտական կողմնորոշման, ընդունելության կարգի ու պայմանների վերաբերյալ,

3) հսկում է քննական հանձնաժողովների կողմից մշակված քննական նյութերի ճիշտ և ժամանակին ձևակերպումն ու բազմացումը, ապահովում է քննությունների անցկացման համար անհրաժեշտ տարածքներ,

4) կազմակերպում և հսկում է սպասարկող անձնակազմի աշխատանքները:

28. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) հսկում է Էլեկտրոնային (առցանց) եղանակով ստացված դիմորդների փաստաթղթերի գրանցամատյանի և հաշվառման այլ փաստաթղթերի պատշաճ վարման ընթացքը.

2) նախապատրաստում է ընդունող հանձնաժողովի նիստերի նյութերը, ընդունելության հետ կապված հարցերի վերաբերյալ տնօրենի հրամանների նախագծերը, արձանագրում է ընդունող հանձնաժողովի նիստերը.

3) պատասխանատու է ընդունելությանն առնչվող բոլոր փաստաթղթերի պահպանման համար:

29. քննական հանձնաժողովի նախագահը՝

- 1) կազմակերպում է քննական տոմսերի և քննական այլ նյութերի մշակումը,
- 2) ընդունող հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրում և ծրարում է քննական տոմսերը և պատասխանատու է Հաստատությունում դրանց պահպանման համար,
- 3) ղեկավարում է քննության ընթացքը և պատասխանատու է քննության անցկացման և հանձնաժողովի աշխատանքի որակի համար,
- 4) պատասխանատու է քննական տոմսերի մեջ հայտնաբերված վրիպակները տեղում ուղղելու համար,
- 5) դիմորդներին բացատրում է քննության ընթացակարգը և ներկայացվող պահանջները,
- 6) ընտրողաբար ստուգում կամ վերստուգում է գրավոր աշխատանքները,
- 7) յուրաքանչյուր քննության ավարտից անմիջապես հետո ընդունող հանձնաժողովին է ներկայացնում քննությունների ամփոփ արդյունքները:

30. Ընդունող հանձնաժողովի լիազորությունները դադարում են ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների ամփոփման, իսկ քննական հանձնաժողովների լիազորությունները՝ համապատասխան քննությունների վերջնական արդյունքների ամփոփման օրվան հաջորդող 3-րդ օրվանից:

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

31. Դիմորդը՝ ՄԿԿՏՀ դիմորդների հայտագրման համակարգում Էլեկտրոնային եղանակով լրացնում է դիմում հայտը, որն իր մեջ ներառում է անձնական տվյալները (անուն ազգանուն հայրանուն, ծննդյան օր ամիս տարեթիվ, Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար), ինչպես նաև Հանրային ծառայության համարանիշը կամ օրենքով սահմանված կարգով դրանից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը և կից ներբեռնում է նաև՝

- 1) լուսանկար,
- 2) կրթության մասին փաստաթղթի (դիպլոմի դեպքում նաև ներդիրի) պատճենը,
- 3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),
- 4) կցագրման վկայականի պատճենը (զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ

Նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական գորակույժային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

5) սույն կարգի 37-րդ կետով սահմանված՝ ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), որը Հաստատության տնօրենը (ռեկտորը) ուսանողներին հրամանագրելուց հետո՝ 2-օրյա ժամկետում ներկայացնում է Լիազորված մարմին,

6) իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝ վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը (առկայության դեպքում),

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոների) դիպլոմների պատճենները (առկայության դեպքում),

8) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),

9) աշխատանքի վայրից տեղեկանքի պատճենը (առկայության դեպքում),

10) Դիմում հայտ ներկայացրած ուսումնական հաստատության հաշվեհամարին փոխանցած գումարի անդորրագրի պատճենը:

32. Ներկայացված կեղծ տեղեկատվության համար դիմորդը ենթակա է օրենքով սահմանված կարգով պատասխանատվության:

33. Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության՝ որակավորման, մասնագիտացման, երաժշտական գործիքի տեսակի կամ մարզաձևի հայտագրմամբ՝ անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

34. Դիմորդի դիմում հայտը հիմնավորմամբ մերժվում է ընդունող հանձնաժողովի կողմից, եթե.

1) դիմորդը դիմում հայտը և/կամ փաստաթղթերը ներկայացրել է թերի և թերությունները դիմորդի կողմից չեն վերացվել այն ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան դիմում հայտերի ընդունման վերջնաժամկետից 1 օր առաջ,

2) ավարտական փաստաթղթում առկա չէ իր նախընտրած մասնագիտության Աղյուսակ 1-ով սահմանված մրցույթային առարկայի գնահատական:

3) առկա (ստացիոնար) ուսուցմամբ հիմնական կրթության հիմքի և մասնագիտության (բացառությամբ՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով «0215 Երաժշտություն և կատարողական արվեստ» բաժնի, «Գեղանկարչություն», «Քանդակագործություն» մասնագիտությունների և պետության կողմից չֆինանսավորվող ուսումնական հաստատությունների) 15, իսկ ՀՀ մարզերում գործող ուսումնական հաստատությունների 13 դիմում հայտից քիչ լինելու դեպքում՝ դիմում հայտերի ընդունման վերջնաժամկետից 1 օր

առաջ, որի մասին նույն օրը տեղեկացվում է դիմումատուին էլեկտրոնային փոստի և հեռախոսակապի միջոցով:

4) միջնակարգ կրթության հիմքով մասնագիտության (բացառությամբ արվեստի ոլորտի և պետության կողմից չֆինանսավորվող ուսումնական հաստատությունների) 10 դիմում հայտից քիչ լինելու դեպքում, եթե առկա չէ հիմնական կրթության հիմքով երկրորդ կուրս:

5) միջնակարգ կրթություն ստացած դիմորդը դիմել է ընդունվելու հիմնական կրթությամբ հատկացված տեղում կամ հակառակը՝ հիմնական կրթությամբ դիմորդը՝ միջնակարգ կրթությամբ:

35. Սույն կարգի 34-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով ներկայացված դիմում հայտերը հիմնավորմամբ մերժվում է ընդունման վերջնաժամկետից 1 օր առաջ, որի մասին նույն օրը տեղեկացվում է դիմումատուին հեռախոսակապի և դիմումատուի էլեկտրոնային հասցեի միջոցով:

36. Դիմորդը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար, Հաստատության հաշվեհամարին վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ: Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը դիմորդին հետ չի վերադարձվում:

37. Ընդունելության մրցույթից դուրս, պահուստային տեղերի հաշվին ընդունվում են՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 15-րդ և «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 27-ի № 545 որոշման պահանջներին համապատասխանող, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան արտոնություններ ունեցող դիմորդները:

5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

38. Ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ մասնագիտությունների՝ տվյալ Հաստատությունում՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում գրանցված դիմորդների հայտերի հիման վրա:

39. Ընդունելության մրցույթն անցկացվում է ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում՝ հետևյալ սկզբունքով.

1) անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության

համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը.

2) Ոլորտային մասնագիտություններով՝ բացառությամբ Աղյուսակ 1-ի «0215 Երաժշտություն և կատարողական արվեստ» գլխի, «Գեղանկարչություն», «Քանդակագործություն» և սպորտի մասնագիտությունների (այսուհետ՝ արվեստի և սպորտ), անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի գնահատականների միջին թվաբանականի և սույն կարգի Աղյուսակ 1-ի տվյալ մասնագիտության քննության/քննությունների գնահատականի(ների) ու տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը, իսկ արվեստի և սպորտի մասնագիտություններով անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է սույն կարգի Աղյուսակ 1-ի տվյալ մասնագիտության քննության/քննությունների առավել բարձր գնահատական(ներ) ստացած դիմորդը.

3) մրցութային հավասար միավորներ ունենալու դեպքում ըստ սահմանված հերթականության առավելությունը տրվում է՝

ա. մեդալակիր-դիմորդին, իսկ արվեստի և սպորտի մասնագիտությունների գծով հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի գնահատականների միջին թվաբանականի և սույն կարգի ցանկերով տվյալ մասնագիտության քննության/քննությունների գնահատականի(ների) ու տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդին.

բ. տվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին.

գ. պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին.

դ. տվյալ մասնագիտության գծով բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին.

ե. դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդին.

զ. հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն

մասնագիտական կրթության դիպլոմի ներդրող գնահատականների առավելագույն միջին թվաքանակական ունեցող դիմորդին.

Է. ըստ տվյալ մասնագիտության համար սույն կարգի ընդունելության մրցութային առարկաների ցանկով սահմանված առաջնային համարվող առարկաներից առավել բարձր գնահատականներ/միավորներ ունեցած դիմորդին.

4) վճարովի ուսուցման տեղերը համալրվում են անվճար ուսուցման տեղերը համալրվելուց հետո՝ սույն կարգի 39-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերով նախատեսված կարգով.

5) մրցույթը համարվում է ավարտված, Հաստատության ընդունելության ընդհանուր (անվճար և վճարովի) տեղերը համալրվելու կամ դիմորդների թիվն այդ տեղերից պակաս լինելու դեպքում:

40. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած որևէ առարկայի ընդունելության քննության դրական գնահատականը, որը ներկայացվում է սահմանված ձևի տեղեկանքով, դիմորդի ցանկությամբ համարվում է Հաստատությունում տվյալ առարկայի ընդունելության մրցութային գնահատական:

41. Ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկայից գնահատական չունեցող դիմորդի համար «Հայոց լեզու» առարկան նրա ցանկությամբ փոխարինվում է որևէ «Օտար լեզու» առարկայով:

42. Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննություններն անցկացնում են քննական հանձնաժողովները՝ Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած ժամանակացույցի համաձայն: Հաստատությունը՝ Լիազորված մարմնի կողմից տեղերը ստանալուց հետո, ժամանակացույցը 2 աշխատանքային օրվա ընթացքում փակցնում է Հաստատությունում՝ ի տես բոլորի և ներկայացնում է Լիազորված մարմնին:

43. ԿՏԱԿ-ի կողմից դիմումատուի անհատական էջում ձևավորվում է քննության մասնակցության թերթիկը, որում նշվում է քննության օրվա, ժամի և քննության անցկացման վայրի մասին տեղեկատվությունը, որը դիմորդը թղթային տարբերակով ներկայացնում է քննական հանձնաժողովին՝ քննասենյակ մտնելիս:

44. Քննական տոմսերը կազմվում են Հաստատության քննական հանձնաժողովների կողմից՝ ընդունելության քննություններից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

45. Գրավոր առարկաների քննական տեքստերի քանակը պետք է լինի խմբերի թվից առնվազն 3-ով ավելի: Գրավոր քննությունների հարցատոմսերը պետք է կազմված լինեն այն հաշվարկով, որ յուրաքանչյուր քննական խմբի համար գործածության մեջ դրվի հարցատոմսի 4 տարբերակ պարունակող, նախապես կոմպլեկտավորված մեկ փաթեթ, իսկ վերջինիս ընտրությունը կատարվի առնվազն 3 փաթեթից:

46. Դիմորդն ընդունելության քննության է ներկայանում անձնագրով (մինչև 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայականով, եթե անձնագիր չունի), կամ գինվորական գրքույկով, կամ ՀՀ

ուստիկանության բաժինների կողմից տրված համապատասխան ձևով և քննական թերթիկով, որոնք ստուգվում են ընդունող հանձնաժողովի կողմից՝ Հաստատություն և քննասենյակ մտնելիս: Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

47. Յուրաքանչյուր քննական խմբում, որպես կանոն, ընդգրկվում է մինչև 30 դիմորդ: Բանավոր քննության դեպքում քննասենյակում միաժամանակ կարող է գտնվել ոչ ավելի, քան 5 դիմորդ:

48. Ընդունելության քննությունների օրերին Հաստատությունում և քննական սենյակում գտնվելու իրավունք ունեն.

1) Հաստատությունում՝ ընդունող հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդներն ու քննական հանձնաժողովի անդամները, սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները: Գրավոր քննության ընթացքին հետևելու նպատակով ընդունող հանձնաժողովի նախագահը կարող է հրավիրել դիմորդների ծնողներ, հասարակայնության ներկայացուցիչներ և լրագրողներ՝ դիտորդի կարգավիճակով:

2) Քննական սենյակում՝ քննական հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդները, ընդունող հանձնաժողովի նախագահը և տեղակալը, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը և սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները միայն ընդունող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները:

49. Արվեստի ոլորտի մասնագիտությունների քննությունների համար նախատեսվում է հետևյալ տևողությունը.

1) «Սուֆեջիո» առարկայի գրավոր թելադրության համար՝ 25 րոպե, իսկ բանավոր քննությանը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու և պատասխանելու համար մինչև 15-ական րոպե.

2) գեղարվեստի մասնագիտություններով՝

ա. գծանկար՝ մինչև 540 րոպե (3 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

բ. գունանկար՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

գ. կոմպոզիցիա՝ մինչև 450 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 5 ակադեմիական ժամ).

դ. քանդակ՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

ե. քանդակի կոմպոզիցիա՝ մինչև 225 րոպե (1 օր՝ 5 ակադեմիական ժամ):

50. Ոլորտային մասնագիտություններով գրավոր քննական աշխատանքները (ներառյալ սևագրությունը) և բանավոր քննությունների ժամանակ դիմորդների նշումները կատարվում են Հաստատության դրոշմակնքված թերթիկների վրա: Վերջիններս ենթակա են հաշվառման և մինչև քննական հանձնաժողովին հանձնելը պահվում են ընդունող հանձնաժողովի նախագահի մոտ:

51. Գրավոր քննական աշխատանքները, բանավոր քննությունների ժամանակ դիմորդներին տրված դրոշմակնքված թերթիկները, լրացված քննական տեղեկագրերը՝ քննական հանձնաժողովի նախագահը քննության ավարտից (գրավոր քննության դեպքում՝ աշխատանքների ստուգումից) անմիջապես հետո հանձնում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Յուրաքանչյուր քննության արդյունքները հաստատվում են ընդունող հանձնաժողովի նախագահի կողմից:

52. Գրավոր աշխատանքների ստուգումը կատարվում է Հաստատությունում, քննական հանձնաժողովի անդամների կողմից:

53. Ոլորտային մասնագիտություններով բանավոր քննությունների համար նախատեսվում է հետևյալ տևողությունը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու համար մինչև 30 րոպե, իսկ պատասխանի համար մինչև 15 րոպե:

54. Ընդունելության քննությունները Ոլորտային մասնագիտություններով գնահատվում են 20 բալային համակարգով: Դրական են համարվում 8 և ավելի միավորները: 8 միավորից ցածր ստացած դիմորդը չի մասնակցում մրցույթին:

55. Հաստատության ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված քննությունների արդյունքների ցուցակները փակցվում են ի տես բոլորի ոչ ուշ, քան տվյալ քննության հաջորդ օրվա ժամը 12-ը:

56. Գրավոր քննության գնահատականը դիմորդը կարող է գրավոր բողոքարկել ընդունող հանձնաժողովի նախագահին՝ քննությունների արդյունքները հրապարակվելուց հետո՝ մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը: Դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում քննական հանձնաժողովը՝

- 1) դիմորդի ներկայությամբ վերստուգում, քննարկում է բողոքարկված աշխատանքը.
- 2) պատճառաբանված մերժում է փոփոխել կամ փոփոխում է գնահատականը՝ այդ մասին տեղյակ պահելով դիմորդին:

57. Գնահատականը փոփոխելու դեպքում այն վավերացվում է քննական հանձնաժողովի նախագահի կողմից, որի համար քննական տեղեկագրում հանձնաժողովի նախագահը տվյալ դիմորդի հերթական համարը վերցնում է շրջանակի մեջ, դրա դիմաց կատարում է «Գնահատականը փոփոխված է» նշումը և ստորագրում: Փոփոխված գնահատականն անց է կացվում նոր տեղեկագրի մեջ: Համապատասխան փոփոխություն է կատարվում նաև դիմորդի քննական թերթիկում: Գնահատականների փոփոխությունը արձանագրվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

58. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկել առանց քննասենյակից դուրս գալու՝ քննական հանձնաժողովի նախագահի ներկայությամբ: Բողոքի քննարկման արդյունքում Հանձնաժողովի նախագահը կարող է վերանայել բանավոր քննության գնահատականը:

59. Ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների հրապարակումից հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 27-ը ներառյալ Լիազորված մարմին է ներկայացվում ընդունելության վերաբերյալ հաշվետվությունը, այդ թվում 17-րդ կետով սահմանված ընդունելության արդյունքները՝ ըստ մասնագիտությունների, կրթության հիմքի և ուսուցման անվճար կամ վճարովի համակարգ ընդունվածների անվանացանկը (անուն, ազգանուն, հայրանուն և ծննդյան տարեթիվը), ինչպես նաև կից գրությամբ առաջարկություններ և տեղեկություններ, այդ թվում՝ սույն կարգի 37-րդ կետով սահմանված ՀՀ օրենսդրությամբ համապատասխան արտոնություններ ունեցող դիմորդների վերաբերյալ:

6. ՈՒՍԱՆՈՂԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

60. Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են Էլեկտրոնային եղանակով լրացված դիմումը և սույն կարգի 31-րդ կետի 3-10-ը ենթակետերով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները, 4 լուսանկար (3x4 չափսի), հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի կամ դիպլոմի բնագիրը իր ներդիրով կամ նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը, իսկ առկայության դեպքում՝ նաև դիմորդների գրավոր քննական աշխատանքները, բողոքարկման դիմումները և դրանց վերաբերյալ որոշումները:

61. Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է որպես ուսանող: Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ, քան հրամանագրման հաջորդ օրը:

62. Դիմորդները հրամանագրվում են ըստ իրենց ուսումնառած կրթության հիմքերի (հիմնական կամ միջնակարգ) առաջին կուրս:

63. Ուսումնական հաստատությունը մինչև դիմորդի հետ համապատասխան պայմանագիր կնքելը՝ նրան և (կամ) նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնում է Հաստատության լիցենզիային և կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, կնքվելիք պայմանագրին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), կրթության գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին և կրթական ծրագրի կազմակերպման մեթոդաբանությանն ու այլ առանձնահատկություններին, որը հրապարակվում է Հաստատության Դիմորդի անկյունում, պաշտոնական կայքէջում

(առկայության դեպքում) և սոցիալական ցանցի էջում ու ծանոթացման մասին ամրագրվում է կնքվելիք պայմանագրում:

64. Հաստատության տնօրենը (ռեկտորը) հրամանագրված դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որտեղ պարտադիր ամրագրվում են ուսանողի ընտրած մասնագիտությունը, ուսուցման ձևը, սովորելու տարիների տևողությունը և Հաստատությունում ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

65. Ուսանողին հանձնվում է պայմանագրի երկրորդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքույկ:

66. Հաստատության ուսումնական խմբում ուսանողների թիվը սահմանվում է՝ առկա (ստացիոնար) ուսուցման համար մինչև 25, հեռակա ուսուցման համար՝ մինչև 20 ուսանող:

67. Հաստատություն չընդունված դիմորդին վերադարձվում են սույն կարգի 31-րդ կետով պահանջված փաստաթղթերը, իսկ դրանց պատճենները, ինչպես նաև քննական աշխատանքները պահպանվում են Հաստատությունում 6 ամիս, որից հետո ոչնչացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

68. Ընդունելության հետ առնչվող կամ մրցույթի անցկացման ընթացքում ծագած հարցերը, որոնք չեն կանոնակարգվում սույն կարգով, կարգավորվում են ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:»:

Աղյուսակ 1

Ց Ա Ն Կ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Մասնագիտության դասիչն ու անվանումը	Որակավորման դասիչն ու անվանումը	Մրցութային առարկաները		
		1	2	3
02 ԱՐՎԵՍ				
021 ԱՐՎԵՍ				
0211 Տեսալսողական արվեստ և մեդիաարվեստ				
0211.01.4 Լուսանկարչական գործ	0211.01.01.4 Լուսանկարիչ	Ֆ	Մ	ՀԼ
	0211.01.03.4 Օպերատոր՝ մինի լուսանկարչական սարքերի	Ֆ	Մ	ՀԼ

0211.02.4	Հրատարակչական գործ և պոլիգրաֆիա	0211.02.01.4	Օպերատոր՝ գրքի արտադրության ավտոմատ գծերի	Ֆ	Մ	Հ
		0211.02.02.4	Օպերատոր՝ գրքի էլեկտրոնային շարվածքի	Ֆ	Մ	Հ
		0211.02.03.4	Կազմարար	Ֆ	Մ	Հ
		0211.02.04.4	Տպագրիչ՝ հարթ տպագրության	Ֆ	Մ	Հ
		0211.02.05.4	Տպագրիչ՝ ծավալային տպագրության	Ֆ	Մ	Հ
		0211.02.06.4	Կարգավորող՝ պոլիգրաֆիական սարքավորումների	Ֆ	Մ	Հ
0212 Նորածնություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն						
0212.01.4	Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն	0212.01.01.4	Նկարիչ-ապակեպատող	Երկ	Մ	Հ
		0212.01.02.4	Ձևավորող՝ ցուցափեղկերի	Երկ	Մ	Հ
		0212.01.03.4	Նկարագրող՝ հախճապակյա իրերի	Երկ	Մ	Հ
0213 Գեղանկարչություն և քանդակագործություն						
0213.01.4	Գեղանկարչություն և քանդակագործություն	0213.01.01.4	Արհեստավոր-մանրանկարիչ	Երկ	Մ	Հ
		0213.01.02.4	Փորագրող՝ քարե գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
		0213.01.03.4	Փորագրող՝ ոսկրե գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
		0213.01.04.4	Փորագրող՝ մետաղյա գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
		0213.01.05.4	Փորագրող՝ փայտյա գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
		0213.01.06.4	Ղրվագող՝ քանդակների	Երկ	Մ	Հ
0213.02.4	Վերականգնողական աշխատանքների իրականացում	0213.02.01.4	Վերականգնող՝ գեղարվեստական նշանակության որմնանկարների	Երկ	Մ	Հ
		0213.02.02.4	Վերականգնող՝ գեղարվեստական նշանակության ծեփվածքների	Երկ	Մ	Հ
		0213.02.03.4	Վերականգնող՝ գեղարվեստական նշանակության փայտե հուշարձանների	Երկ	Մ	Հ
		0213.02.04.4	Վերականգնող՝ գեղարվեստական նշանակության քարե հուշարձանների	Երկ	Մ	Հ
0214 Կիրառական արվեստ						
0214.01.4	Ոսկերչություն	0214.01.01.4	Ոսկերիչ	Ը	Ֆ	Հ
		0214.01.02.4	Մշակող՝ կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի	Ը	Ֆ	Հ
0214.02.4	Բրուտագործություն	0214.02.01.4	Բրուտ	Երկ	Մ	Հ
		0214.02.02.4	Պատրաստող՝ խեցեգործական գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
0214.03.4	Փայտագործություն	0214.03.01.4	Պատրաստող՝ փայտյա գեղարվեստական իրերի	Երկ	Մ	Հ
0214.04.4	Գորգագործություն և ժանյակագործություն	0214.04.01.4	Գորգագործ	Երկ	Մ	Հ
		0214.04.02.4	Գորելենագործ	Երկ	Մ	Հ
		0214.04.03.4	Ասեղնագործ-ժանեկագործ	Երկ	Մ	Հ
04 ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ						
041 ԲԻՉՆԵՍ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄ						
0411 Հաշվապահություն և հարկեր						
0411.01.4	Հաշվապահություն	0411.01.01.4	Հաշվետար	Մ	Օ	Հ
0412 Ֆինանսներ, բանկային գործ և ապահովագրություն						
0412.01.4	Ֆինանսներ	0412.01.01.4	Գանձապահ	Մ	Օ	Հ
0412.02.4	Ապահովագրություն	0412.02.01.4	Գործակալ՝ ապահովագրության	Մ	Օ	Հ
0414 Շուկայագիտություն և գովազդ						
0414.01.4	Գովազդ	0414.01.01.4	Գործակալ՝ գովազդի	Մ	Օ	Հ
0415 Գործավարություն						
0415.01.4	Գործավարություն	0415.01.01.4	Գործավար	Մ	Օ	Հ

0416 Մեծածախ և մանրածախ առևտուր						
0416.01.4	Առևտուր	0416.01.01.4	Վաճառող	Մ	Օլ	Հլ
		0416.01.02.4	Գործակալ՝ գնումների	Մ	Օլ	Հլ
		0416.01.03.4	Գործակալ՝ մատակարարման	Մ	Օլ	Հլ
05 ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ						
052 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐ						
0521 Շրջակա միջավայր						
0522.01.4	Շրջակա միջավայրի պահպանություն	0522.01.01.4	Օպերատոր՝ կեղտաջրերի մաքրման կայանքի	Զ	Մ	Հլ
		0522.01.02.4	Օպերատոր՝ քիմիական եղանակով ջրի մաքրման կայանքի	Զ	Մ	Հլ
06 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ /ՏՀՏ/						
061 ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ						
0611 Ինֆորմատիկա						
0611.01.4	Համակարգիչների շահագործում	0611.01.01.4	Օպերատոր՝ համակարգչի	Մ	Ֆ	Հլ
		0611.01.02.4	Օպերատոր՝ համակարգչային գրաֆիկայի	Մ	Ֆ	Հլ
07 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ						
071 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ						
0711 Քիմիական ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ						
0711.01.4	Ազոտական պարարտանյութերի և օրգանական սինթեզի տեխնոլոգիա	0711.01.01.4	Օպերատոր՝ ամոնիակային սելիտրայի արտադրության	Զ	Մ	Հլ
		0711.01.02.4	Օպերատոր՝ ամոնիակային սուլֆատի արտադրության	Զ	Մ	Հլ
0711.02.4	Էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիա	0711.02.01.4	Օպերատոր՝ քիմիական արտադրության գոլորշիացման կայանքի	Զ	Մ	Հլ
		0711.02.02.4	Օպերատոր՝ քիմիական արտադրության ավտոմատ և կիսավտոմատ գծերի	Զ	Մ	Հլ
		0711.02.03.4	Գալվանազործ	Զ	Մ	Հլ
0713 Էներգետիկա և էլեկտրատեխնիկա						
0713.01.4	Էլեկտրասարքավորումների արտադրություն	0713.01.01.4	Փաթաթող՝ էլեկտրական մեքենաների տարրերի	Ֆ	Մ	Հլ
		0713.01.02.4	Հավաքող՝ էլեկտրական մեքենաների և ապարատների	Ֆ	Մ	Հլ
0713.02.4	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	0713.02.01.4	Էլեկտրամոնտաժող՝ էլեկտրասարքավորումների	Ֆ	Մ	Հլ
		0713.02.02.4	Արհեստավոր՝ էլեկտրասարքավորումների նորոգման և սպասարկման	Ֆ	Մ	Հլ
0713.03.4	Էլեկտրակայանների և ցանցերի տեխնիկական սպասարկում	0713.03.01.4	Էլեկտրամոնտաժող՝ ենթակայանների	Ֆ	Մ	Հլ
		0713.03.02.4	Սպասարկող՝ ենթակայանների	Ֆ	Մ	Հլ
		0713.03.03.4	Նորոգող՝ ռելեային պաշտպանության և ավտոմատ սարքավորումների	Ֆ	Մ	Հլ
		0713.03.04.4	Էլեկտրամոնտաժող՝ ռելեային պաշտպանության և ավտոմատ սարքավորումների	Ֆ	Մ	Հլ
		0713.03.05.4	Էլեկտրամոնտաժող՝ բաշխիչ ցանցերի	Ֆ	Մ	Հլ
		0713.03.06.4	Էլեկտրիկ՝ բաշխիչ ցանցերի շահագործման	Ֆ	Մ	Հլ
0713.04.4	Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում	0713.04.01.4	Էլեկտրամոնտաժող՝ բաշխիչ ցանցերի և երկրորդային շղթաների	Ֆ	Մ	Հլ
		0713.04.02.4	Էլեկտրամոնտաժող՝ էլեկտրասարքավորումների, ուժային և լուսավորման ցանցերի	Ֆ	Մ	Հլ

0713.05.4	Էլեկտրամատակարարում երկաթուղային տրանսպորտում	0713.05.01.4	Էլեկտրամոնտաժող՝ միացման ցանցերի	Ֆ	Մ	ՀԼ
		0713.05.02.4	Էլեկտրամոնտաժող՝ քարշիչ ենթակայանների	Ֆ	Մ	ՀԼ
0713.06.4	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում	0713.06.01.4	Օպերատոր՝ կաթսայատան	Ֆ	Մ	ՀԼ
		0713.06.02.4	Փականագործ՝ կաթսայատան սարքավորումների նորոգման և սպասարկման	Ֆ	Մ	ՀԼ
		0713.06.03.4	Փականագործ՝ ջերմային ցանցերի սարքավորումների նորոգման և սպասարկման	Ֆ	Մ	ՀԼ
0714 Էլեկտրոնիկա և ավտոմատացում						
0714.01.4	Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների փորձարկում	0714.01.01.4	Փորձարկող՝ Էլեկտրական սարքերի, մեքենաների և ապարատների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.01.02.4	Հսկիչ՝ Էլեկտրական մեքենաների, ապարատների և սարքերի հավաքման աշխատանքների	Ֆ	Մ	ՀԼ
0714.02.4	Մեքենաների և մեխանիզմների Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	0714.02.01.4	Փականագործ-Էլեկտրիկ՝ Էլեկտրասարքավորումների նորոգման	Ֆ	Մ	ՀԼ
		0714.02.02.4	Էլեկտրամեխանիկ՝ վերելակների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.02.03.4	Էլեկտրամեխանիկ՝ առևտրային և սառնարանային սարքավորումների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.02.04.4	Մոնտաժող՝ Էլեկտրական վերելակների	Ֆ	Մ	ՀԼ
0714.03.4	Սարքավորումների տեխնիկական շահագործում	0714.03.01.4	Կարգավորող՝ ավտոմատ գծերի և ագրեգատային հաստոցների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.03.02.4	Կարգավորող՝ ծրագրային ղեկավարմամբ հաստոցների և մանիպուլյատորների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.03.03.4	Փականագործ-գործիքագործ	Ֆ	Մ	ՀԼ
		0714.03.04.4	Փականագործ՝ մեխանիկական հավաքման աշխատանքների	Ֆ	Մ	ՀԼ
0714.04.4	Էլեկտրավակուումային արտադրության տեխնոլոգիա	0714.04.01.4	Թիթեղագործ՝ Էլեկտրավակուումային սարքերի դետալների ձևման	Ֆ	Մ	ՀԼ
		0714.04.02.4	Մոնտաժող՝ Էլեկտրավակուումային սարքերի	Ֆ	Մ	ՀԼ
		0714.04.03.4	Փաթաթող՝ Էլեկտրավակուումային արտադրության դետալների	Ֆ	Մ	ՀԼ
0714.05.4	Բժշկական սարքավորումների տեխնիկական շահագործում	0714.05.01.4	Էլեկտրամեխանիկ՝ բժշկական սարքավորումների նորոգման և սպասարկման	Ֆ	Մ	ՀԼ
0714.06.4	Ժամացույցների արտադրության տեխնոլոգիա և նորոգում	0714.06.01.4	Հավաքող՝ ժամացույցների և ժամացույցների բաղադրիչների	Ֆ	Մ	ՀԼ
		0714.06.02.4	Ժամագործ	Ֆ	Մ	ՀԼ
0714.07.4	Չափիչ-ստուգիչ սարքերի և ավտոմատիկայի տեխնիկական շահագործում	0714.07.01.4	Փականագործ՝ չափիչ-ստուգիչ սարքերի	Ֆ	Մ	ՀԼ
		0714.07.02.4	Փականագործ՝ ավտոմատ չափիչ-ստուգիչ սարքերի	Ֆ	Մ	ՀԼ
0714.08.4	Օպտիկա-մեխանիկական արտադրության սարքավորումներ և տեխնոլոգիա	0714.08.01.4	Օպտիկ	Ֆ	Մ	ՀԼ
0714.09.4	Ռադիոէլեկտրոնային արտադրության տեխնոլոգիական	0714.09.01.4	Մոնտաժող-կարգաբերող՝ ռադիոէլեկտրոնային արտադրատեսակների փորձարկման սարքավորումների	Ֆ	Մ	ՀԼ

	սարքավորումների կարգաբերում	0714.09.02.4	Մոնտաժող-կարգաբերող՝ ռադիոէլեկտրոնային արտադրության տեխնոլոգիական սարքավորումների	Ֆ	Մ	Հ
0714.10.4	Ռադիոէլեկտրոնային սարքավորումների և սարքերի արտադրության տեխնոլոգիա	0714.10.01.4	Մոնտաժող՝ ռադիոէլեկտրոնային սարքերի, սարքավորումների և ապարատների	Ֆ	Մ	Հ
		0714.10.02.4	Կարգավորող՝ ռադիոէլեկտրոնային սարքերի, սարքավորումների և ապարատների	Ֆ	Մ	Հ
		0714.10.03.4	Փականագործ-նորոգող՝ ռադիոէլեկտրոնային սարքերի, սարքավորումների և ապարատների	Ֆ	Մ	Հ
0714.11.4	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	0714.11.01.4	Ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման	Ֆ	Մ	Հ
		0714.11.02.4	Ռադիոմոնտաժող՝ հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ցանցերի	Ֆ	Մ	Հ
0714.12.4	Էլեկտրոնային և միկրոէլեկտրոնային տեխնիկայի արտադրության տեխնոլոգիա	0714.12.01.4	Օպերատոր-միկրոեռակցող՝ էլեկտրոնային և միկրոէլեկտրոնային տեխնիկայի	Ֆ	Մ	Հ
		0714.12.02.4	Օպերատոր՝ էլեկտրոնային և միկրոէլեկտրոնային դիֆուզիոն սարքավորումների	Ֆ	Մ	Հ
		0714.12.03.4	Հավաքող՝ էլեկտրոնային և միկրոէլեկտրոնային սարքերի և սարքավորումների	Ֆ	Մ	Հ
0714.13.4	Էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում	0714.13.01.4	Էլեկտրամեխանիկ՝ էլեկտրոնային հաշվողական մեքենաների նորոգման	Ֆ	Մ	Հ
		0714.13.02.4	Էլեկտրամեխանիկ՝ էլեկտրոնային հաշվողական մեքենաների շահագործման և տեխնիկական սպասարկման	Ֆ	Մ	Հ
0714.14.4	Պարենային արդյունաբերության սարքավորումների տեխնիկական շահագործում	0714.14.01.4	Օպերատոր՝ սննդամթերքների արտադրության սառնարանային սարքավորումների	Ֆ	Մ	Հ
		0714.14.02.4	Օպերատոր՝ սննդամթերքների արտադրության սարքավորումների	Ֆ	Մ	Հ
0714.15.4	Ավտոմատիկան, հեռուստամեխանիկական և կապը երկաթուղային տրանսպորտում	0714.15.01.4	Էլեկտրամեխանիկ՝ ազդանշանային, կենտրոնացման և արգելափակման սարքերի շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման	Ֆ	Մ	Հ
		0714.15.02.4	Էլեկտրամոնտաժող՝ ազդանշանային, կենտրոնացման և արգելափակման սարքերի	Ֆ	Մ	Հ
0714.16.4	Նախագգուշացնող և հակահրդեհային ազդանշանային համակարգի մոնտաժում և շահագործում	0714.16.01.4	Մոնտաժող՝ նախագգուշացման և հակահրդեհային ազդանշանային համակարգերի	Ֆ	Մ	Հ
0714.17.4	Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում	0714.17.01.4	Մալուխագործ-գողող	Ֆ	Մ	Հ
		0714.17.02.4	Էլեկտրամոնտաժող՝ էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցների	Ֆ	Մ	Հ
0714.18.4	Փոստային կապ	0714.18.01.4	Կապի օպերատոր	Ֆ	Մ	Հ

0715 Մետալուրգիա և մեքենաշինություն

0715.01.4	Նյութերի ձուլմամբ մշակման տեխնոլոգիա	0715.01.01.4	Հալող՝ մետաղի և համաձուլվածքների	բ	Ֆ	Հլ
		0715.01.02.4	Կաղապարող	բ	Ֆ	Հլ
		0715.01.03.4	Ձուլող	բ	Ֆ	Հլ
0715.02.4	Մետաղների մշակման տեխնոլոգիա՝ ճնշմամբ	0715.02.01.4	Դարբին	բ	Ֆ	Հլ
		0715.02.02.4	Կարգաբերող՝ դարբնամամլային սարքավորումների	բ	Ֆ	Հլ
0715.03.4	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	0715.03.01.4	Գազատեռակցող	բ	Ֆ	Հլ
		0715.03.02.4	Էլեկտրատեռակցող	բ	Ֆ	Հլ
		0715.03.03.4	Էլեկտրատեռակցող՝ ավտոմատ և կիսավտոմատ մեքենաներով	բ	Ֆ	Հլ
0715.04.4	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	0715.04.01.4	Օպերատոր՝ ավտոմատ և կիսավտոմատ գծերի հաստոցների և կայանքների	բ	Ֆ	Հլ
		0715.04.02.4	Օպերատոր՝ ծրագրային ղեկավարմամբ հաստոցների	բ	Ֆ	Հլ
		0715.04.03.4	Խառատ	բ	Ֆ	Հլ
		0715.04.04.4	Ֆրեզող	բ	Ֆ	Հլ
072 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ						
0721 Պարենամթերքի տեխնոլոգիա						
0721.01.4	Հացաթխման արտադրության տեխնոլոգիա	0721.01.01.4	Հացթուփ	Կ	բ	Հլ
		0721.01.02.4	Օպերատոր՝ խմորման մեքենաների	Կ	բ	Հլ
0721.02.4	Շաքարի արտադրության տեխնոլոգիա	0721.02.01.4	Օպերատոր՝ շաքարի արտադրության գոլորշիացման կայանքի	Կ	բ	Հլ
		0721.02.02.4	Օպերատոր՝ շաքարի հյուլթի դեֆեկոսատուրացիոն գործընթացի	Կ	բ	Հլ
		0721.02.03.4	Օպերատոր՝ շաքարի արտադրության դիֆուզիոն գործընթացի	Կ	բ	Հլ
0721.03.4	Գինեգործություն և հյութերի արտադրություն	0721.03.01.4	Վարպետ՝ գինու և հյութերի նախնական արտադրության	Կ	բ	Հլ
		0721.03.02.4	Օպերատոր՝ հյութերի և օշարակների արտադրության	Կ	բ	Հլ
0721.04.4	Կենդանական հումքի նախնական վերամշակում	0721.04.01.4	Պատրաստող՝ բնական երշիկային թաղանթի	Կ	բ	Հլ
		0721.04.02.4	Մսագործ	Կ	բ	Հլ
0721.05.4	Մսամթերքի արտադրություն	0721.05.01.4	Օպերատոր՝ մսամթերքի ջերմային մշակման կայանքի	Կ	բ	Հլ
		0721.05.02.4	Օպերատոր՝ կիսաֆաբրիկատների ջերմային մշակման կայանքի	Կ	բ	Հլ
		0721.05.03.4	Պատրաստող՝ մսի կիսաֆաբրիկատների	Կ	բ	Հլ
		0721.05.04.4	Օպերատոր՝ եփած երշիկեղենի արտադրության ավտոմատացված գծի	Կ	բ	Հլ
		0721.05.05.4	Օպերատոր՝ նրբերշիկի արտադրության ավտոմատացված գծի	Կ	բ	Հլ
0721.06.4	Ձկնեղենի վերամշակման տեխնոլոգիա	0721.06.01.4	Մշակող՝ ձկնամթերքի	Կ	բ	Հլ
		0721.06.02.4	Օպերատոր՝ ձկնամթերքի ծխահարման սարքավորման	Կ	բ	Հլ
0721.07.4	Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա	0721.07.01.4	Օպերատոր՝ պաստերացման սարքավորման	Կ	բ	Հլ
		0721.07.02.4	Օպերատոր՝ չոր կաթնային մթերքների արտադրության սարքավորումների	Կ	բ	Հլ

		0721.07.03.4	Օպերատոր՝ սուբլիմացիոն գործընթացի սարքավորման	Կ	Ք	Հլ
		0721.07.04.4	Օպերատոր՝ յուղի, պանրի և կաթի արտադրության գոյորշիացման և խտացման սարքավորումների	Կ	Ք	Հլ
		0721.07.05.4	Օպերատոր՝ պաղպաղակի արտադրության հոսքային գծի	Կ	Ք	Հլ
		0721.07.06.4	Վարպետ՝ կաթնային և կաթնաթթվային մթերքների արտադրության	Կ	Ք	Հլ
		0721.07.07.4	Օպերատոր՝ թթվակաթնային և մանկական կաթնային մթերքների արտադրության	Կ	Ք	Հլ
		0721.07.08.4	Պանրագործ	Կ	Ք	Հլ
0721.08.4	Հրուշակեղենի տեխնոլոգիա	0721.08.01.4	Հրուշակագործ	Կ	Ք	Հլ
		0721.08.02.4	Պատրաստող՝ բիսկվիտների	Կ	Ք	Հլ
		0721.08.03.4	Պատրաստող՝ վաֆլիների	Կ	Ք	Հլ
		0721.08.04.4	Պատրաստող՝ դրածների	Կ	Ք	Հլ
		0721.08.05.4	Պատրաստող՝ կարամելի	Կ	Ք	Հլ
		0721.08.06.4	Պատրաստող՝ կոնֆետների	Կ	Ք	Հլ
		0721.08.07.4	Պատրաստող՝ մարմելադային մթերքների	Կ	Ք	Հլ
		0721.08.08.4	Օպերատոր՝ կշռաբաշխիչ փայթեթավորող մեքենաների	Կ	Ք	Հլ
0721.09.4	Ճարպայուղային արտադրության տեխնոլոգիա	0721.09.01.4	Օպերատոր՝ մայոնեզի պատրաստման կայանքի	Կ	Ք	Հլ
		0721.09.02.4	Օպերատոր՝ յուղերի և ճարպերի բյուրեղացման կայանքի	Կ	Ք	Հլ
		0721.09.03.4	Օպերատոր՝ մարգարինի արտադրության հոսքային գծի	Կ	Ք	Հլ
0722 Նյութեր						
0722.01.4	Անտառային համալիր սարքավորումների տեխնիկական շահագործում	0722.01.01.4	Փականագործ՝ փայտամթերման սարքավորումների նորոգման	Երկ	Մ	Հլ
0722.02.4	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա	0722.02.01.4	Պատրաստող՝ կահույքի զարդային տարրերի	Երկ	Մ	Հլ
		0722.02.03.4	Օպերատոր՝ փայտամշակման սարքավորումների և հոսքային գծերի	Երկ	Մ	Հլ
0722.03.4	Սինթետիկ խեժերի, պլաստմասսաների արտադրություն և դրանց վերամշակում	0722.03.01.4	Ձուլող՝ պլաստմասսայի	Կ	Ք	Հլ
0722.04.4	Քիմիական մանրաթելերի արտադրության տեխնոլոգիա	0722.04.01.4	Օպերատոր՝ քիմիական մանրաթելերի արտադրական գործընթացի	Կ	Ք	Հլ
		0722.04.02.4	Օպերատոր՝ քիմիական մանրաթելերի ոլորման ու ձգման	Կ	Ք	Հլ
0722.05.4	Ապակեթելային նյութերի արտադրություն	0722.05.01.4	Օպերատոր՝ ապակեթելային նյութերի մշակման արտադրական գործընթացի	Կ	Ք	Հլ
		0722.05.02.4	Օպերատոր՝ ապակեմանրաթելերի ոլորման սարքավորումների	Կ	Ք	Հլ
0722.06.4	Ապակու արտադրության տեխնոլոգիա	0722.06.01.4	Պատրաստող-փչահարող՝ ապակե պատրաստվածքների	Կ	Ք	Հլ
		0722.06.02.4	Փայլեցնող՝ ապակու և ապակե պատրաստվածքների	Կ	Ք	Հլ
		0722.06.03.4	Հղկող՝ ապակու և ապակե պատրաստվածքների	Կ	Ք	Հլ

0723 Տեքստիլ արդյունաբերություն						
0723.01.4	Կտորեղենի արտադրության տեխնոլոգիա	0723.01.01.4	Օպերատոր՝ հանգուցագործող մեքենայի	Ֆ	Ք	Հ
		0723.01.02.4	Վերականգնող՝ թեթև արդյունաբերության պատրաստի արտադրանքի	Ֆ	Ք	Հ
		0723.01.03.4	Ջուլիակ	Ֆ	Ք	Հ
0723.02.4	Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա	0723.02.01.4	Գործող	Ֆ	Ք	Հ
		0723.02.02.4	Մանող	Ֆ	Ք	Հ
		0723.02.03.4	Օպերատոր՝ գործող սարքավորումների	Ֆ	Ք	Հ
		0723.02.04.4	Օպերատոր՝ սանդերքագիչ սարքավորումների	Ֆ	Ք	Հ
		0723.02.05.4	Օպերատոր՝ մանվածքի փաթաթման սարքավորումների	Ֆ	Ք	Հ
		0723.02.06.4	Օպերատոր՝ ժապավենի արտադրության սարքավորումների	Ֆ	Ք	Հ
		0723.02.07.4	Հյուսող՝ մանվածքի	Ֆ	Ք	Հ
0723.03.4	Կարի արտադրության տեխնոլոգիա	0723.03.01.4	Օպերատոր՝ կարի սարքավորումների	Ֆ	Մ	Հ
		0723.03.02.4	Դերձակ	Երկ	Մ	Հ
		0723.03.03.4	Ձևարար			
		0723.03.04.4	Ջերմամշակող՝ հագուստների	Ֆ	Ք	Հ
0723.04.4	Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա	0723.04.01.4	Մշակող՝ կաշվե իրերի արտադրության դետալների, կիսաֆաբրիկատների և պատրաստվածքների	Ֆ	Ք	Հ
		0723.04.02.4	Օպերատոր՝ կաշվե իրերի արտադրության հոսքային գծի	Ֆ	Ք	Հ
		0723.04.03.4	Կարող՝ կաշվե իրերի	Երկ	Մ	Հ
		0723.04.04.4	Ձևարար՝ կաշվե պատրաստվածքների	Երկ	Մ	Հ
		0723.04.05.4	Հավաքող՝ կաշվե պատրաստվածքների	Երկ	Մ	Հ
0723.05.4	Կոշիկի արտադրության տեխնոլոգիա	0723.05.01.4	Կոշկարար՝ օրթոպեդիական կոշիկների	Երկ	Մ	Հ
		0723.05.02.4	Կոշկակար	Երկ	Մ	Հ
		0723.05.03.4	Օպերատոր՝ կոշիկի ձևման սարքավորումների	Երկ	Մ	Հ
0724 Ընդերքաբանություն						
0724.01.4	Օգտակար հանածոների հարստացում	0724.01.01.4	Օպերատոր՝ հանքաքարի հարստացման կայանքի	Ք	Ֆ	Հ
		0724.01.02.4	Օպերատոր՝ լեռնարդյունաբերական մեքենաների	Ք	Ֆ	Հ
		0724.01.03.4	Բաժնաչափող	Ք	Ֆ	Հ
0724.02.4	Լեռնային աշխատանքներ	0724.02.01.4	Պայթեցնող	Ք	Ֆ	Հ
		0724.02.02.4	Լեռնագործ՝ մաքրման հանքախորշի	Ք	Ֆ	Հ
0724.03.4	Հանքարդյունաբերական մեքենաների և սարքավորումների շահագործում	0724.03.01.4	Օպերատոր՝ խտացուցիչների	Ք	Ֆ	Հ
		0724.03.02.4	Օպերատոր՝ ջարդման կայանքների	Ք	Ֆ	Հ
		0724.03.03.4	Օպերատոր՝ աղացման կայանքների	Ք	Ֆ	Հ
		0724.03.04.4	Օպերատոր՝ հանքարդյունաբերության հեռակառավարման վահանակի	Ք	Ֆ	Հ
		0724.03.05.4	Օպերատոր՝ հանքաքարի չորացման կայանքի	Ք	Ֆ	Հ

		0724.03.06.4	Օպերատոր՝ հանքաքարի քամման կայանքի	Բ	Ֆ	ՀԼ
		0724.03.07.4	Օպերատոր՝ օգտակար հանածոների արդյունահանման արտադրության գոյորշիացման կայանքի	Բ	Ֆ	ՀԼ
0724.04.4	Հետախուզական- շահագործական հորատում	0724.04.01.4	Մոնտաժող՝ հորատման աշտարակի	Բ	Ֆ	ՀԼ
		0724.04.02.4	Էլեկտրամոնտաժող՝ հորատման աշտարակի	Բ	Ֆ	ՀԼ
		0724.04.03.4	Օպերատոր՝ հորատման սարքավորումների	Բ	Ֆ	ՀԼ
0724.05.4	Հորատանցքերի շահագործում	0724.05.01.4	Արհեստավոր՝ հորատանցքերի շահագործման	Բ	Ֆ	ՀԼ
0728 Միջուրտային մասնագիտություններ						
